

ՄԱՍԻՍ

Շ Ա Ւ Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 22

31 ՄԱՅԻՍ 1903

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն



ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի արեւելեան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հառաւել ղրգ. եւ գաւառներուն համար յիսուն ղրգ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Զրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած լինելէ ետք իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելի վերջ՝ այս տեսակ առարկաները նկատուրեան չեն առնուիր:

Ի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռն-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در عیاده غلطه ده (ماسيس) غرضتى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դ. Աղաթիս

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՀԻՒՆԵԴՈՒԹՅՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶՅՐՈՒԹՅՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմնը տկարացուցած և ընդհանուր անզօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդս զօրացուցիչ բանի մը կարօտ է որ դիւբը շուտմը կատարեալ առողջութեան հասցընէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւատարմ չիկայ: Ասիկայ թէ օխորժակ կուտայ և թէ մարտողութիւնը կը շտապէ. Մարմնը կը զարգացընէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղբութիւնը կը վերակառնէ և հիւանդութեան դիմադրելու համար ընդհանուր դրութեան զօրութիւն կուտայ: Ասգոթի Բաղադրութիւնը թէ կէրակուր և թէ դեղ է. և տկարացած դրութեան մը կարօտ եղած միս և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ. և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգիչ զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջ գրութիւնը երբ միս և զաւալ կը կորսնցնէ և հետեապէս շուտմը այնչափ կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւբաւ զո՛հ կ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԻՆՂԱԹՐՈՒԹՅՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, որժի վատնումը կը դարձնէ և առողջատես միս կը կազմէ: Անդ միշտ վարդազոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Բոլոր գեղարձեցիչ և գեղարձանեցիչ իր ծախիս:

Շիշերու վրայ ասոր ուշադրութիւնը ընել պէտք է:

ԱՊՍՈՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան, ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան և թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ և այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ մնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ զընողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կրանն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչ կը քրոն մարդը:

Փորձեցէ՛ք և և պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵՍԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն և Սէլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեք և առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին և զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին՝ դուխը լրագրավաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊՍՏՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՇԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդոյին ներքեւ, երաշխաւորեալ գրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին հան- 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար սը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւ այլն՝ թատրոնները, նաեւ Պօլտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիօնը, Բրէնթանի, Պէլ-Ժառաինիէոի, Օթէլ աը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալբ-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Տօք եւ Անթրըքօ է Մակագէն եւ ուրիշ ընդհանուր մթերանոցներ, բազմաթիւ գործարաններ, մեծ-պանդոկներ, Հալէթ եւ ընկերութեան մեծ գրավաճառանոցը եւ այլն:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կաղմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Աէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Սոյն ընկերութեան Կ. Պոլտոյ գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԷՖ. ԱՃԱՌԵՍՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար:

Հասցէ.— Պօլիս, Մահմուտ փաշա, Պէլլիք Երլազ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Էֆ. Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիւտի մեծ վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլաբ, թիւ 46, ուր ճոխ պէսպիսութիւն մը կայ ամէն տեսակ հնութեանց:

I A C O N T R A N C E

I A F O R P E T U

W O R L D W I D E L Y K N O W N

I T E M W I D E L Y K N O W N

[The following text is extremely faint and largely illegible due to the age and quality of the scan. It appears to be a detailed list or index of items, possibly related to the 'I A F O R P E T U' mentioned above. The text is organized into several columns and rows, with some lines appearing to be headings or sub-sections. Due to the low contrast, specific words and numbers cannot be accurately transcribed.]

ՄԱՍԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յեղիմ ազդեցութիւնը գրականութեան մեջ. ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՃԵԱՆ : — Պատահական նամակներ. ՔՐԻՉԱՆԹԷՄ : — Ախտաւոր հոգիներ. ԶԱՊԷԼ ԵՄԱՅԵԱՆ : — Հարցում մը. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՑ : — Բաժնուած սիրտեր (Բանաստեղծութիւն. Գ. մրցանակ) ԱՐՄԷՆ ՉՐԱՔԵԱՆ : — Նուիրական աւանդութիւններ. «Ներդուսի վանքը». ԳՆԴԱՄ : — Ճերմակները (Բանաստեղծութիւն) Վ. : — Ուրաւագիծներ — Վայրկեանական. «Գ. ՊՈՒՊԻ». ԳԱՄԷԻ : — Խմբագրական Նօթեր :

ՑԵՂԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ժողովուրդը անհասանելի կը բազկանայ : Ամէն անձ իր նկարագրիւր ունի որ չի կրնար կէտ առ կէտ նմանը ըլլալ ուրիշի մը անհատական նկարագրին, բայց անպատճառ ունի անոր հետ յարաբերական նմանութիւն մը : Նման պայմաններու մէջ ապրող անհասանելի աւելի շատ հաւանականութեամբ՝ հակումներու, սովորութեանց, արամադրութեանց, ըմբռնման, ճաշակի և վարուողութեան նոյնութիւններ կրնան ունենալ :

Այդ ընդհանուր յատկանիշները որոնք ժողովուրդը մը կազմող անձերուն աւելի կամ նուազ հասարակ են՝ կը կազմեն ցեղին նկարագրիւր, որ անհատին միջոցաւ կը հաղորդուի գրականութեան :

Ազդի մը գրականութիւնը իր լայն գլխերուն մէջ այնքան սերտ յօդերով կապուած է զայն արտադրող ցեղին ընդհանուր նկարագրին հետ, որքան սեղմ զիծերով միացած է դործ մը իր հեղինակին անձին հետ : Գրուածք մը նոյն իսկ մարդն է, ըսուած է : Եթէ դործ մը այնքան անընդմիջական կերպով կապուած է մարդուն և անձը՝ այնքան յարաբերաբար կապուած է իր ցեղին, ըսել է անհատին արտադրած դործն ալ այնքան

զօրաւոր կապով մը կապուած է ժողովուրդին :

Տոնային նկարագրին՝ ժողովուրդին մը տաւորական կեանքին վրայ ունեցած ազդեցութեան գլխաւոր արգասիքն է կարգ մը գրականութեանց սահմանափակումը ցեղին մէջ : Գրողներ դանուած են որոնք միայն իրենց ազդին մատչելի կրցած են ըլլալ, որովհետեւ իրենց ետը շատ անձուկ կապերով զօդուած է այն միջավայրին և անհասանելուն որոնց մէջ ապրած է :

Քիչերու տրուած է՝ ժամանակին ազդեցութիւնը, բոլոր ժառանգաբար ստացուած նախասիրութիւնները, ճաշակները, և իր անձը իր բնարտաբերին, ցեղին և ընտանիքին կապող հակումները իր մէջը լուսնու և արտադրել գործ մը որ ոչ մէկ ցեղի և ոչ մէկ ժողովուրդի կը պատկանի՝ այլ ամէն մարդու, ամէն ազդի և ամէն ժամանակի : Եթէ վերածնութեան դարերու դրագէտները հնութեան վերադարձ մը ընելով՝ այդ անցեալ ժգեանակովը ապրեցան, ատիկա ուրիշ բան չէ եթէ ոչ կեղծիք մը ուր մարդիկ կը ներկայանային իրաւ հին տարազով՝ բայց նոր ըմբռնութով :

Ներկային մարդը՝ իր անցեալին մէջ ապ-

րող սերունդի մը շարունակութիւն՝ ժառանգաբար ալ արդէն հին աւանդականութեան կապուած է :

Այդ անցեալին հետախուզութիւնը կապ մըն է որ ճնշիչ ազդեցութիւն մը ի գործ կը դնէ մարդուն վրայ, անոր միտքը դասականութեան լուծին տակ ձգելով :

Գրագէտը, ուրեմն, ցեղին նկարագրէն զերծ մնացած ըլլալու համար պէտք է հակադէ նաև բոլոր այն կապերուն դէմ որոնք մարդը կը կապեն իր նախորդներուն, իր նախահայրերուն և իր ցեղակիցներուն հետ : Անոնք որ այդ բանը կրնան ընել, պարզ գրողներ չեն, այլ համաշխարհային և համազգային գրողներ, որոնք մատի վրայ կրնան համրուիլ :

Գրական գործերու ստուար մասը, ընդհակառակը, կը կազմեն այն գործերը որոնք իրենց հեղինակներէն դուրս են անոնց համար միայն որոնք իրենց շուրջը կ'ապրին, ներշնչուած իրենց ժամանակին բարքերէն, մոլութիւններէն և հակումներէն որոնց մէջ նախեւառաջ ամէնէն լայն տեղը բռնած են անշուշտ տոհմային նկարագրին՝ առանձնաշատակ նախասիրութիւնները և ճաշակները :

Հրեայ գրականութեան՝ ժողովուրդին առօրեայ կեանքին հետ ունեցած յարաբերութեան պատճառով կրած ազդեցութիւնն ալ զօրաւոր եղած է, մանաւանդ պէտք է գիտնալ թէ զայն գիրի առնողներն ալ բացարձակապէս հրեայ ժողովուրդին համար արտադրած են և հետեւաբար ցեղին նկարագրէն այն քան շատ բան խառնած են որքան որ կրնային :

Գրագէտը արդէն պարզապէս յարգարիչ մըն է և ոչ թէ արուեստագէտ մը : Ձեւակերտական արուեստները (arts plastiques) ինչպէս որ երկու դասակարգներու՝ I. Գեղարուեստներ (Beaux arts) և II. Զարդարուեստներ (Arts décoratifs) բաժնուած են, նոյնպէս նաև Գպրութիւնք երկու ճիւղեր ունին :

Բանաստեղծը՝ ինչպէս արձանագործը, նրկարիչը և ճարտարապետը երբեք որ և է կերպով կաշկանդուած չեն և կրնան ներշնչման վրայ հիմնուած այնպիսի շեղումներ և ըմբռնումներ երեւան հանել որոնք բացարձակապէս իրենցը եղած ըլլան և բոլորովին

հակառակ ըլլան ընդունուած կարգերու և սկզբունքներու : Օգտակարութեան գաղափարով նախագրուած ըլլալու պէտք չունի արուեստագէտը ինչպէս նաև բանաստեղծը՝ արտադրելու համար, այլ սոսկ ներշնչման : Մինչ վիպագիրը և թատերագիրը, զոր օրինակ, պարզ գիտողներն են այն միջավայրին ուր իրենք կ'ապրին և զոր պիտի պատկերացնեն հազիւ ներելի համարուած զարդարանքներով պծնելով՝ առանց հակասելու իրենց նիւթին որ մարդկային հոգին և բարքն են : Այնպէս որ բանաստեղծութիւնը ինչպէս որ կը համեմատի գեղարուեստներու հետ, վիպագրութիւնը և թատերագրութիւնը կը նոյնանան զարդարուեստներու հետ ուր արուեստագէտը «էական նպատակ ունի ուղղակի նպատակու նախապէս գոյութիւն ունեցող աւարկայի մը, շինուածքի մը և մակերեւոյթի մը զարդարումին» (Henry Havard) : Հետեւաբար չի կրնար իր միտքը թռիչ առնել անկաշկանդ ներշնչումէ մը ազդուած՝ քանի որ տրուած սահմանի մը մէջ պիտի գործէ : Բարքերու և անհասներու շուրջը դարձող գրականութիւն մը իրեն համար ունի սահման մը որմէ դուրս ոք և է չեղում չկրնար ընել : Այն դերը զոր Գեղարուեստներու մէջ ներշնչումը կը կատարէ ժողովուրդային մտաւոր և բարոյական զարգացման նպատակով, Գրականութեան մը մէջ կը կատարէ դիտելու կարողութիւնը որ դրագէտին ամէնէն մեծ դրամազուլան է :

Եւ եթէ հեղինակը դիտելու կարող է՝ անշուշտ առաջին անգամ իր ուշադրութեան ներկայացող անհասները և անձերը անոնք են որոնք իր շուրջը կ'ապրին : Այդ առաջին ենթակաները առանց երկբայութեան իր ազդակիցներն են որոնց բարքերը և սովորութիւնները նոյնութեամբ պիտի պատկերացուին և ստով պիտի ծնի ցեղին գրականութիւնը :

Իտալական գրականութեան մէջ առաջին արձակագիրը՝ Պօքքաչիօ առաջին ալ զրոյն է որ իր շուրջը անցած դարձածովը զբաղած է :

Բայց դժբաղդաբար ուրիշ բան չէ գտած նկարագրելու՝ եթէ ոչ աղտոտ և լպիրջ բարքեր որոնք իր ժամանակին վրայ կատարեալ գաղափար մը կու տան : Եթէ իր ուղղու-

Թիւնը շարունակուէր՝ այսօր բոլորովին մեծ արժանիք մը պիտի ունենային իր յաջորդները, մինչդեռ խաղական ինչպէս նաեւ Ֆրանսական գրականութեան այդ և յաջորդ դարերուն, Վերածնութեան անունով հրնութեան մէջ թափառող միտքերու շարքին մէջ՝ հազիւ հազ կը հանդիպինք քանի մը գրողներու որոնք իրենց ժամակակը պատկերացնելու կարող եղած ըլլան: Նոր խմորուելու վրայ եղող ազգեր՝ ամէնքն ալ լատին բունէն առած իրենց մտաւորական զարգացման ազդակները, այդ կեղծ դասական ուղութեան մէջ խեղդեցին իրենց նորարծարծ եսը հին գրականութեան նմանութիւններով ուր թէ՛ անձերը եւ թէ՛ պատկերները անցեալէն առնուել մտադրուած էր:

Ժամանակին ոգին եթէ նոյն իսկ հեզինակին անձովը անխուսափելի կերպով ազդած է այդ դործերուն վրայ՝ շատ սքողուած կերպով մըն է որ կը յայտնուի:

Գերմանացիք առաջին հարուածը տուին այդ կեղծ դասականութեան և մշակեցին ժողովրդական գրականութիւն մը ուր ամէն բանէ առաջ կը դանտես գերմանը իր բարքերովը, իր աւանդութիւններովը, իր աւելորդապաշտութիւններովը, իր կիրքերովը և մտլութիւններովը:

Իայց եւրոպական գրականութիւններու մէջ եթէ կայ գրականութիւն մը որ իր ծագման օրերէն սխեալ անանձնայայտուկ նկարագիր մը կրցած է ունենալ, այն ալ Սպանիականն է ուր ցեղը՝ հակառակ քանի մը պլազան խառնուրդներէ գոյացած, ըլլալուն՝ կրցած է ուժով իսկատիպութիւն մը պահել:

Եւ ատոր պատճառը այն է որ աշխարհագրական ազդեցութիւնը այնքան հզօր եղած է Սպանիոյ վրայ որքան պատմական ազդեցութիւնը:

Եթէ դիտուին Սպանիոյ գեղեցիկ վայրերը, որոնք մերթ վայրենի շքեղութեամբ մը և մերթ թափանցող չնորհով մը, բայց միշտ տարօրինակ գեղեցիկութեամբ մը օժտուած են, մարդ կը հասնայ արհամարանքը որ այդ ժողովուրդը ունէր ամէն յաճ ու գուհիլ բանի համար, իր հանդարտութիւնը ու դոռողութիւնը՝ ճակատագրին դէմ յոխորտալու համար:

Սպանեօլ ցեղը իր ծանրութիւնը՝ Հոսմէական աղբիւրէ, խորութիւնը, տեսլապաշտութիւնը, միտքի քականութիւնը՝ Գերմաններէն, քմայքը, եռանդը և փայլը Մաւրիտանացիներէն առած է, անշուշտ առանց կրկէ դադրելու Երբայական ազդեցութիւնը որ անհերքելի հետքեր թողուցած է այս ցեղին վրայ:

Այս գրականութիւնը իր ծագման օրերուն մէջ, իր ժողովրդական երգերուն մէջ իսկ ունի տիպար մը՝ Սիտը որ սպանիական ազգին սիրական տիպարն է, որուն վրայ կ'երևան ցեղին բոլոր յատկութիւնները: Սպանիական գրականութեան ծայրայեղ ազդայնական հանգամանքն է դիխաւոր պատճառը դիւցաղներգութեան շարգանալուն և թատրերգութեան ու վէպին չափազանց զարգանալուն, որովհետեւ վերջիններէն աւելի յարմար միջոց մը չկար ժողովուրդը ուսումնասիրելու:

Եւ մասնաւորապէս սպանիական թատրոնը բացարձակապէս ինքնածին, ինքնատիպ, նոր և գուտ սպանիական է: Ոչ մէկ սեռի մէջ Սպանիոյ ինքզինքն այնչափ ամբողջութեամբ նկարած է որչափ թատրերգութեան մէջ: Եթէ Ռօմանսեոսն հին Սպանիային, ասպետական Սպանիային հաւատարիմ պատկերն է, սպանիական թատրերգութիւնն ալ Վերածնութեան Սպանիային պատկերն է, որ ոչ նուազ դիւցաղնական է, բայց աւելի կ'նստու և աւելի կրօնամոլ:

Ինչ որ Վերածնութեան անունով բոլոր Եւրոպայի մէջ ընդունելութիւն գտած էր՝ Սպանիոյ մէջ փորձուեցաւ և հին թատրերգակներու նմանութեամբ սպաներէն խաղեր՝ դրոնուեցան, բայց սպանիացին, կրակոտ, հպարտ և եսամոլ ժողովուրդ, չսիրեց այդ շատ ծանր և շատ չոր թատրերգութիւնը որ իր ցեղային և տեղական նկարագիրը չունէր: Եւ ալ անկէջ յետոյ թատրերգութիւնը հաւատարմօրէն հետուեցաւ ժողովուրդին ճաշակին, որ կը կայանար պատերազմի սիրոյն, կրօնամոլութեան, և ասպետական կերպով ըմբռնուած սիրոյ մէջ, երևք՝ պայման որ երբեակ դիմադրի՞ն էր Սպանիացի ժողովուրդին: Եւ արդէն թատրերգութեան փայօ

լած շրջանին— ԺԶ. դարուն — ուր ամէն Սպանիացի կամ զինուոր էր կամ վանական կամ տարփաւոր և կամ յաճախ երեքը մէկէն, հեղինակները նոյնիսկ շատ անգամ այս վիճակներէն անցած՝ կրցած են պէտք եղած գոհացումը տալ ունկընդիր ժողովուրդին, որ հոն տեսած է իր զաղափարները, զգացումները և կիրքերը կատարեալ կերպով պարզուած: Ասոր հաւար է որ սպանիական գրականութիւնը զուտ տոնմային եղած է և միայն իր ժողովուրդին համար ընդունելի:

Յեղը հոն իր ազդեցութիւնը ցոյց տուած է դերազանցապէս: Ինչ որ սպանիականին մէջ՝ ծայրայեղութեան հասած է՝ ուրիշ ազդերու մէջ ալ աւելի կամ նուազ իր ազդեցութիւնը ի գործ դրած է և որչափ որ մարդ համայնարհային ձգտումներ ունենալու միտելով հանդերձ, իրեն հետ ապրող ժողովուրդները՝ համայն մարդկութեան, մտաւորը հեռաւորէն, իրը՝ օտարինէն, իր ընտանիքը՝ իր ցեղէն, և վերջապէս իր անձը՝ իր ընտանիքէն նախապատիւ համարելու բնազդական հակումը ունի, ցեղին ազդեցութիւնը գրականութեան մէջ անխուսափելի պիտի ըլլայ:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ

Արմաշի Դպրեւանքի միաբաններէն Տ. Մեսրոպ Վ. Տարօնեցի Պոլիս եկած է՝ իր հետը բերելով, վանքին որբանոցին մէջ եօթը տարիէ ի վեր ուսում առնող վեց տղաք որոնք որբանոցի ընթացքը աւարտած ըլլալով, ներկայացան Ս. Պատրիարքին, որ անոնց՝ հարցումներ ուղղելով գոհ մնաց առած պատասխաններէն, և մէկ քանի օր մնալու համար Հիւանդանոց զրկեց զանոնք: Յառաջիկայ շաբթու պիտի զրկուին իրենց տեղերը, ուսուցչական և այլ պաշտօններով: Տ. Մեսրոպ Վ. Արմաշի համար Ս. Միւռնոն առնելով մօտերս պիտի վերադառնայ Դպրեւանք:

— Կը հերքուի այն լուրը, թէ Հայ Հռոմէականաց Պատրիարքարանը որոշած ըլլայ Նոր Տճմարի գործածութիւնն ընդունիլ յառաջիկայ տարիէն:

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՏԻԿԻՆ ՎԵՐՈՆԵԿ ԱՌ ՕՐ. ՕՅԷԼԵԱ

Սիրելի ՕՖէլիսա,

Ձի սիրածիս չափ կան սա դրապէտները, խմբագիրները...:

Քիչ մնաց որ այդ անիրաւունները էրիկէս դատէին զիս. զիտե՞ս կրք, նոյն իսկ կարգուած գիշերս, տակուսին օրիորդ կոչուելու իրաւունքս ձեռքէ չի հանած:

C'est toute une histoire. մտիկ ըրէ՛:

Գոնէ դուն զիտես թէ որքան դժուարութեամբ ամուսին մը դուայ ինձի, հազար հոգերէ, հազար դժուարութիւններէ ետքը:

Ամիսներով գնաց եկաւ— քիչ մնաց պիտի հիւանդանայի— հայրս չէր ուղեր, դրացիները կը բամբասէին, նախանձոտներ հոս, վայրահաչներ հոն, գործ աւրողներ ուղածիդ չափ, տակնուվրայութիւն մը տունին մէջ. խեղճ մայրս շուարած մնացած էր— Պիտի ըլլայ— Ձի՞ պիտի ըլլայ—:

Եւ երբ վերջապէս այս ամէնուն կը յաղթեմ, հայրս կը զիջածի, ոսկիները կը համրէ. վեց ամիս նշանուած կը մնանք, օժիտներս կը պատրաստուին, երբ ասկէց տասնըհինգ օր առաջ— հարսնիքիս հոն էիր, չէ՛— վերջապէս կը պսակուիմք: Չես գիտեր որքան սիրտս գէշ կղաւ, որքան լացի տունէն բաժնուած միջոցիս: Երբ այս ամէնը կ'ըլլայ, կը լմննայ, մեր նոր բունած տունը կը հասնինք առտուան գէմ (հիանալի ննջասենեակ մը շիտիկ տուած է, այս օրերս եկուր տեսնես) հաղիւ հանուած— ամօթէս կը մեռնի կոր— երբ ամուսինս ազուոր քաներ կ'ըսէր ականջիս որոնք սարսուռ մը կը դնէին ողնաշարիս մէջ և կը դողայի անձրուի տակ մնացած քանարիայի մը պէս, դեռ ձերմակ սկարբիներս չի, հանած, յանկարծ բարկութիւն մը կուգայ վրան, երեսը կը թթուեցնէ, պրկուեցնէրը կը դողան, գէշ գէշ ինձի կը նայի:

Ինչպէ՞ս շուտ մը կը փոխուին էրիկ մարդերը...:

Վայրկեան մը առաջ ուրիշ էր և հիմայ ուրիշ . առաջի մարդը չէ այլ եւս , վրաս վախ կու գայ , պիտի խենդեմամ , պիտի մարիմ : Երա՞ղ է արդեօք :

Չէ' , հոգիս , երաղ չէր , այլ իրականութիւն :

Նորէն հագուել սկսաւ , անգամ մըն ալ պրպտեց օժիտի անտուկիս յատակը , ժամացոյցին նայեցաւ , հառաչ մը արձակեց , — քրտինքի մէջ կը խեղդուէր կոր— և այսպէս քիչ մնաց պիտի առնէր քալէր , դիս հոն պիտի ձգէր իմ յուսահատութեանս մէջ , երեւակայէ թէ ինչո՞ւ :

Խնդալէ մտնելիք բան է , սղաշտելի Օֆէլիաս . արդէն ըսի , քիչ մնաց իրաւցնէ պիտի բաժնուէինք , ամուսնայութեան շնա' , որովհետեւ . . . որովհետեւ Մանգուսմէն . . . :

Մի' խնդար , Օֆէլիաս , կատակ չէ , ընդհակառակը c'est tout ce qu'il y a de sérieux . .

Համբերէ' , պիտի պատմեմ գլխուս եկածը և պիտի տեսնես թէ լրագիրները ինչերո՞ւ պատճառ կրնան ըլլալ երբ խելքերնուն փշածը կը դրնն :

Մֆ , շունչս բռնուեցաւ , կայնէ քիչ մը հանգիստ առնեմ :

Ըսածիս պէս , աղուորիկ Օֆէլիաս , կիրակի գիշեր կը կարդուինք , փառաւոր հարմիրք մը կ'ընենք—իրաւ , ան գիշեր աղւորցե՞ր էի— և առտուան դէմ կ'երթանք մեր նոր տունը :

Մարդ , մարդասանք չի կար հոն : Առջի բերան քիչ մը պողիս եկաւ , միս մինակ աշոր հետ . . . :

Անմիջապէս լամբան վառեց , ինքզինքս օտար տեղ մը գտայ , ամէն բան նոր էր շուրջըս , վարանու մի պէս բան մը ունեցայ , սղղասիկ գլխու սրտոյս մը և բարակ քրտինք մը մազերուս արմատը :

Ճերմակ շրջադեատիս փէշերը բռնած , ասպուշ ասպուշ ասղին անդին կը նայէի . բակին մէջտեղը կայնած եւ շփոթած էի , ինչ ընելիքս չէի գիտեր , ճիշտ ինչպէս կը կայնին Պարտիզակէն նոր եկած սպառուհիները :

Մինչեւ ասանդուղներէն վեր ելլելն է ե-

ղեր , անկէ ետքը վարժուեցայ . ինչպէ՞ս , ինչո՞ւ , մի' հարցներ Օֆէլիաս , կարգուիս նէ կը սորվիս :

Ննջասնեակս չպիտի նկարագրեմ քեզի , առաջին այցելութեանդ surprise մը ընելու համար քեզի :

Ներս մտնելուս պէս շուրջս կը նայիմ և երախտադէտ ակնարկ մը ուղղելով իրեն' հասկցնել կուզեմ թէ սենեակը չիք է և կասաւորումը smart .

Նախ քանի մը պարապ խօսքեր ըսինք իրարու , և յետոյ խնդրեցի որ օժիտի անտուկս բանայ որովհետեւ մէջէն բաներ ունէի առնելիք :

Ինքը այդ գործով զբաղած միջոցին , առիթէն օգտուեցայ , — կունակը ինծի դարձուցած էր— ես ասղին հանուելու :

Մտուկիս բերանը կը բանայ և ինծի դառնալով՝

— Եկո՛ւր , Վերոնիկ , միասին պարպենք .

— Բայց այդ վաղուան գործ է , դուն մի' խառներ , ես առնելիքներուս տեղը դիտեմ :

— Բայց չե՞ս ուղեր որ մէկիկ մէկիկ հիանամ այս ամէն աղուոր բաներուն վրայ :

— Երկար գործ է ատիկայ , բայց քանի որ կուզես և եթէ կը կարծես թէ այս ժամուս լաւագոյն բան մը չունինք ընելիք , սիրով :

Եւ ճիշդ այն անտուկս բացած էր որուն մէջ ճերմակեղէններս դրուած էին : Շրջազգեստներուս անտուկը միւսն էր , մեծը :

Մտուկիս էն վրան դրուած էին երկու բէյնուառներս , մէկը երկնագոյն soie de chineէ և միւսը saumon :

Մէկիկ մէկիկ թոթուեց և նետեց գանսաբէին վրայ :

Ասոնց տակը դրուած էին ժիւբօններս , երկու հատը մետաքսէ և միւսը քաթքա : Fraise écrasée մը ունիմ , ճերմակ տանթէլէ վօլաններով , froufroutant , un amour de jupon :

Ասոնք ալ խառնիխուռն նետեց բէյնուառներուս վրայ :

Ինչ կոչս են ասանկ բաներուն մէջ էրիկ մարդերը : Դիտողութիւն պիտի ընէի , բայց առաջին գիշերը , ինչպէ՞ս կուզես հոգիս :

Կարգը քաւ-ֆօնսներուս եկաւ , ամէն շքր-

Չաղգեստներուս գոյնէն ունիմ: Ասոնք ալ միւսներուն քով նետեց:

Յետոյ շապիկներս: Մարապետներուն կարել տուի, տեսնաս ի՞նչ աղուոր են, de vrais bijoux! ասոնք ալ բաքէթով կը նետէ միւսներուն վրայ:

Եւ յետոյ, իրարու ետեւ, միւս fonuks, գուլպաներս, թաշկինակներս, գլշերաղբեսափ սաւեհս—Մաթիլտին ընծայ տուածը—կօշիկներուս տուիերը, հովանոցս, հովահարներս և ինչ որ կար սնտուկիս մէջ:

Բայց դարձանալին ո՞ւր է, գիտես, փոխանակ, ըսածին պէս, այս ամէնուն վրայ հիանալու, ընդհակառակը, տենդոտ աճապարանքով մը կը բանար, կը նայէր, կը թօթուէր և կը նետէր անդին:

Չայն չի հանեցի թէ և, բայց ներսէս ինքզինքս կուռէի կոր:

Երբ ա՛լ սնտուկին մէջ բան չի մնաց, յուսահատ կերպով մը ինծի դարձաւ և կէս բարկութեամբ մը՝

—Ո՞ւր է, հարցուց:

—Ի՞նչ բան:

—Թուղթը:

—Ո՞ր թուղթը:

—Կաթողիկոսինը:

—Ի՞նչ կաթողիկոս:

—Կիլիկիայինը:

—Կիլիկիայի կաթողիկոսը ի՞նչ գործ ունի սնտուկիս հետ:

—Անոր Կօնդակը, Մանգուսէն, 618րդ թիւը ո՞ւր է, կը պահանջեմ:

Խելքի՞ն եկաւ արդեօք, վախոցայ գիտե՛ս:

—Ի՞նչ պիտի ընես, խուչս, այդ թուղթը:

—Սյդ իմ գիտնալիք բանս է, ես կը պահանջեմ որ այդ թուղթը գտնես, թերեւս միւս սնտուկին մէջն է:

—Չէ՛, հողիս, պարապ տեղը մի՛ փնտռեր, միւս սնտուկին մէջն ալ ատանկ կոնդակ մօտդակ չի կայ: Աստեղ ժամ է:

—Կը խնդրեմ որ կատակի չելլենք. իմ իրաւունքս է փնտռել այդ թանկաղին սաչածոնազիրը:

—Բայց մէկը տուող չեղաւ ինծի, մաքէս ալ չանցաւ ատանկ բան մը:

—Չեմ զարմանար, ձեզի պէս թերի կըրթուիւն ատանկ աղջիկները ատանկ սուրբ, ատանկ մաքուր բաներու չեն մօտենար: Կօնդակ. դուք ասանկ բաներէ չէք խտրութիւր, համ չէք աւներ. լուրջ, շինիչ դրութիւններու կարեւորութիւն չէք ընծայեր, կոն մի Գրիգորիթէմ, բեգիլ բաներ: Սակայն, Տիկին, այս օրուան օրս, մայիս Ծէն սկսեալ մանուսնդ, մեր ընտանեկան բարքերը փոխուեցան, հիմայ բաւական չէ որ հարս մը հետը բերէ անաղարտ անուն մը և անբիծ մարմին մը, բաւական չէ լեցուն դրամօժիտ մը և քանի մը սնտուկ ճեճեզ, զլխաւորը Սիսի կաթողիկոսին գրած կոնդակն է, ատանց անոր աղջիկ մը ճակատը բաց չի կրնար ներկայանալ իր ամուսնոյն, ինչպէս այն ամէն աղջիկները որոնք իրենց կուսական գլխակը... տունը մոռցած կ'ըլլան երբեմն: Ուրեմն կրնա՞ք ցուցնել ինծի:

—Ի՞նչ բան կ'ուզես տեսնել, հրաման ըրէ, քանի որ այլևս տրամադրութեանդ ներքեւ եմ:

—Կաթողիկոսին կօնդակը:

—Աստուածդ սիրես, բաւական է այդ կատակը. արդէն չատ համով ալ չէ: Ասանկ գլշերով կաթողիկոսի խօսք չեն ըներ, մեղք է. և յետոյ կը մտիմ կոր, խրեանք:

—Բայց, Վերոնիկս, տարբեր կերպով բան մը չեմ կրնար ընել քանի որ իմ թերթս՝ Մանգուսէն՝ կը պատուիրէ որ «Բահանան իր Մատոցին ծոցը, վաճառականը իր գրասենեակին մօտ և աղջիկը իր օժիտներուն մէջ պէտք է պահած ունենայ Խապեան Սրբազանին կօնդակը» և դուք, Տիկին, չունիք դայն...:

—Ուրե՛մն:

Քառորդ մը մտածելէն ետքը՝

—Չեմ գիտեր թէ ի՞նչ պէտք է ընեմ այս պահուս:

—Ընելիքդ չե՛ս գիտեր, երեք ժամէ ի վեր չըսէիր, անգուժ:

Հայն չունչ մը առի և կէս ժամ ետքը լաւագոյն բարեկամները եղանք իրարու:

Բայց եթէ չի խելաբերէի և թող տայի որ իր շարականը երգէր, ան՛ս, ինչ փորձանք պիտի գար գլխուս, որովհետեւ Մանգու-

մեն... ուրկէ՞ց ալ կը գանան այս խելքերը :

Ահա քեզի լրագիրներուն օգուտը :

«Աղջիկները իրենց օթիտին մէջ կաթողի-
կոսին կոնդակը ունենալու են եղեր...» :

Sont-ils naïfs, chérie !

Մարապետ ըլլողներուն համար կը հաս-
կընամ, բայց կարգուողներուն ալ :

Ձի սիրածիս չափ չկա՞ն սա լրագիրները :

Պատմութիւնս ի՞նչպէ՞ս դտար : Շարու-
նակութիւնը ինծի եկած ատենդ կը պատմեմ :

Սպասելով այդ հաճոյքին , կը գրկեմ գեղ ,
Օփէլիսս , անուշ աղաւնիս :

Քոյդ
Վերոնիկ

Ընդօրինակեց
ԳՐԻՉԱՆՏԵՍ

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ

Լոկ ձեզ ձերմակ փրփուրներու ծածանոտ
Ովկէանի մ'անեղրութեան մէջ անհետ
Սիրուն ձերմակ կղզի մ'ըլլար անծանօթ
Ու միս մինակ հոն ապրէինք քեզի հետ :

Հոն ամէն բան ձերմակ ըլլար , ամէն բա՛ն :
Հորիզոնէն մինչեւ դաշտը ամայի
ձերմակը լոկ տիրապետէր անխափան .
Միւս գոյներուն գոյութիւնն ալ մոռնա՛յի :

ձերմակ՝ երկինք , լուսին , արեւ ու ծաղիկ ,
Ու ամէն տեղն ալ մեր պղտիկ վիլլային :
ձերմակ ամպերն ալ , կուտակուած խաղաղիկ ,
Գլխուդ վրայ ամպհովանի ըլլային :

Բաց ի գորչէն նորք մաղերուդ վէտվէտուն
Ու կապոյտէն աչքերուդ ջինջ ու բեկբեկ ,
ձերմակը լոկ տիրէր անծայր ու անհուն
Եւ անկէ դատ գոյն մը չըլլար հոն երբե՛ք :

Ու հալէին սրտիս բիծերը ամէն
Այդ ձեզ ձերմակ մթնոլորտին մէջ անբիծ ,
Ո՛հ , քու չքնաղ էութեանդը պաշտումէն
Ուրիշ ոչ մէկ երազ յո՛ւզէր այլեւս զիս :

Պարուրէինք զիրար , հո՞գիս , անասման
Ու հոգեթով սիրոյ մը մէջ ձեզ ձերմակ
Եւ երկնից մէջ հալող ամպի մը նման
Հասնէինք հոն ձիւն յուզումներով համակ :

Վ .

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Մ Ը

Ամէն երկիր ու ամէն ցեղ իր շօվէնները
ունի , որոնք զգացումներ կը շահագործեն ,
Թերութիւններ կը շողոքորթեն՝ ժողովրդա-
կանութիւն չահելու համար :

Մեր շօվէնները , մանաւանդ լրագրական
հրատարակի վրայ , չունենալով ուրիշ բան
շողոքորթելու կամ շահագործելու , հինէն ի
վեր հայ կնկան «աւանդական պարկեշտու-
թիւնը ու խաթունութիւնն է» որ առաջ կը
քշեն ամէն անգամ որ առիթը ներկայանայ :
Ատոնց նայելով , մաքուր բարքերը հայ կըն-
կան մենաշնորհ են միայն , բարոյական ըս-
ուածը մեր հնաւուրց ու նուիրական բարքե-
րուն մէջ , ընիկ գաւառներու խորը միայն
պէտք է վնասել եւ պէտք է ստսկումով
խոյս տալ քաղաքակրթութենէն որ մեր սըր-
բանուէր բարքերը պիտի դայ սպականել , իր
մծամարթրեան միջրոպով ,—իրը թէ ամբողջ
քաղաքակրթութիւնը Մծմարթրի մէջ պա-
րունակուած ըլլար միայն ,—ինչ որ արդէն
պէտք եղածէն աւելի ապացուցուած է ա-
րեւմուտքի աւելի մօտ , մեծ կեդրոններուն
բարքերուն խաթարուելովը :

Մեր տղայութենէն ի վեր ատոնց գրիչին
տակ ուրիշ բան չէինք կարդացած , բայց
եթէ , վճարուած դամբանականի մը խողո-
վակով դագաղի մը վրայ սիրուած գովա-
սանքներու պէս չափուած , կոկուած , յանձ-
նարարուած նախադասութիւններ , ինչպէս
«գաւառի նահապետական բարքեր» , «նախ-
նիքներէ ժառանգուած անթերի բարոյական» ,
«հայ կնոջ աւանդական պարկեշտութիւն»
«տո՛մային բնածին ամօթխածութիւն» , ա-
նանկ որ՝ մարդ ուղէր չուզէր կը մղուէր խոր-
հելու որ ամուսնական մեր դիտցած քիչ կամ
չատ խիստ ու անյարմար պայմաններու մէջ
ապրող հայ կինը , եթէ կը շարունակէր ըս-
ուածին պէս անթերի ու անքննադատելի մնալ ,
կամ հրեշտակ մըն էր , երկնային արարած մը ,
առանձնաշնորհուած էակ մը , կամ անողջայ
մըն էր , փայտի կտոր մը :

Երբ դեռ ահա աղջիկ մը իր հաւանութիւնովը ու սիրելովը չէ որ կը կարգուի, երբ զայն օրօրոյն մէջը քնացած տեղը իսկ կը նշանեն մէկու մը որուն վազը ինչ ըլլալիքը ոչ ոք զիտէ, երբ ամուսնութեան մը մէջ ամէնէն աւելի հաշիւները, ազգականական կապերը, նիւթական շահերն են որ կը խօսին ու կը դործեն, երբ ք չենք կրնար բնականաբար վայրկեան մը իսկ միտքերնուն անցընել որ այդ կինը—նոյն իսկ պարկեշտասուն Հայունի կամ աւելի մասնաւորելով, դաւառի աւանդապահ, նահապետական կին, —կրնայ երջանիկ ըլլալ, կրնայ պարկեշտ մնալ: Եւ տարակոյտ չկայ որ պիտի դայ օր մը, վայրկեան մը ուր ամէն բան ռոնակոխ պիտի ընէ: Բայց որովհետեւ շունի իր եւրոպայի քոյրերուն բարքերու համարձակութիւնը, յարաբերութիւններու դիւրութիւնը ու միջավայրին ներդաժմութիւնը, աւելի զգոյշ ու աւելի դադուակ պիտի գործէ: Ատկէց ահա՝ Կեղծիքը զոր կը սիրեն շահագործել մեր շօլէնները:

Եթէ Եւրոպայի մէջ ազատ Սէրը ամօթ մը չէ, գոնէ կեղծիք մըն ալ չէ և չեղած բանի մը վրայ speculation չեն ըներ, պարկեշտութիւնը իրենց մենաշնորհ չեն ըներ, և իրենց կիները իբր հրեշտակներ ընդունելու չափ չեն կուրնար: Ըստ իս՝ կինը կին է ամէն տեղ, ինչպէս բնութիւնը բնութիւն է ամէն տեղ և զգացումը՝ զգացում: Եթէ ամուսնական այնքան անկաշկանդ, խոհական ու նորագոյն օրէնքներով օժտուած երկիրներու մէջ իսկ ասպականութիւնը տեղ ըրած է իրեն, մեր ամուսնական խիստ ու խեղճ, ծթրած ու անբնական սրայ հաններուն մէջ ինտո՞ր կուղէք որ ապօրինաւորութիւնը ահագին ճամբայ մը ըրած չըլլայ:

Ատենէ մը ի վեր մեր օրաթերթերուն ու հանդէսներուն մէջ բարեբաղդութիւնը կ'ունենանք կոր կարգալու, աւելի լայնօրէն ու ձեռնհասօրէն գրուած, դաւառի կեանքէ պատկերներ որոնցմով մօտէն հետեւելով գաւառի կեանքին հողերանութեան, աւելի իրազեկ կ'ըլլանք կոր անոնց զգացումներուն ներքին պայքարին և քիչ զարմանքով չէ որ կը տարատարինք կոր վերոյիշեալ տարադաձեւ ու

լուսցողակ պարբերութիւններուն. ու յօդուածներուն: Բայց հակառակ ատոր, նորէն չեմ կրնար չսույլել երբ վերջերս Մասիսի մէջ հրատարակուած Շահարիկի գեղեցիկ «Սյրին» կարգացած ատենս կը հանդիպիմ մարդուս աչքերը բացող, տարօրինակ սողերու: Խոնջ կ'ըսէք, երբ աղուոր որբեւայրի մը ետեւէն կ'իջնայ ամբողջ գեղը, սխալ կ'ը ինամիէն, փետին հօրմէն մինչև գեղին տէրտէրը: Եւ յետոյ մտիկ ըրէք սա սողերը որոնց մէջը իրական կեանքի սարսուռ մը կը թրթուայ և կ'ասպացուցանէ որ հայ կինը նոյն իսկ դաւառի կարգալ գրել չի գիտցող հայ կինը՝ որուն քաղաքակրթութիւնը ոչ իսկ մատին ծայրովը դպած է դեռ, ոչ հրեշտակ մըն է, ոչ ալ փայտի կտոր մը, այլ կին է իսկապէս, բնութեան ձայներովը աւելի, զգայուն կին:

«Սյրին ինքն ալ իր տկարութիւնները ունէր. երբ ցանկութիւնը կը ցնցէր իր ուժեղ մարմինը, ջղագրգռութիւն մը առաջ բերելով ու կը կը սկսէր լալ: Պահեր կային ուր շուտով պիտի խարուէր, եթէ երբեք մէկը դար դուռը դարնէր»:

«Պարտէզին մէջ, անուշաբոյր մանիակին ու վարդին մէջտեղը կը տարուբերէր արբելու ու կը տարածէր իր զգլխի մարմինը հոն՝ հմայաթափ: Եթէ երբեք այդ պահուն մէկը գտնուէր քովը, պիտի հրապուրուէր շուտով»:

«Ջղաձգութիւն մը կուճենար ամէն անգամ որ էրիկը միտքը իցնար: Բնութիւնը տուած էր իրեն արգասաւորելու ցանկութիւնը»:

Բայց ասոնք, եթէ մինչև հիմա մեր մէջը կազմուած արտաուոց առասպելները հիմնովին կը քանդեն, միւս կողմէ գո՞տնակութիւնը կուտան մեզի, մեր կիները ու զանոնք նկարագրող գրիչները, վերջապէս բնութեան հետ ներդաշնակութեան մէջ տեսնալու: Ադ չէ սակայն ինչ որ կուղէի ըսել: Աւելի կարեւորը կայ և անհրաժեշտ է որ կարող գրիչներ, մասնաւոր ընադաւառի հարազատ ու անկեղծ խորհոյներ ու ակամատեսներ դան պարզել ինքիւրը և մեղի վերջնականապէս լուսաբանել:

Շահարիկի վիպակին մէջ երկու սող ամենէն աւելի աչքիս դարկին:

Գաւառի պարկեշտութիւնները տարփողող
 և մծմարթերեան ապերասանութիւնները
 ճաղկող բարոյախօսներու խօսքին նայելով,
 կը կարծէինք որ գաւառի մէջ ամուսնացող
 աղաք ու աղջիկներ մինչև կարգուած օրեր-
 նին իրար քիչ անգամ միայն կը տեսնային,
 ան ալ հանդիսաւոր պարագաներու ու բազ-
 մութեան մէջ և երբեք մինակ չէին մնար և
 այդ առիթով քիչ քարեր չէ որ նետած են
 և բողոքական նորամուտ սովորութիւններու
 դէմ:

Բայց տեսէք թէ ի՞նչ կը դրէ Շահարիկ
 Գրիգորի համար որ մինակ ամբողջ դիշեր մը
 անցուցած է իր նշանած աղջկան քով:

«Նշանառքէն շատ շատ ամիս մը ետքը,
 աղջիկը ա՛լ կրնայ առանձին մնալ խօսեցեա-
 լին հետ Գրիգոր իր դիշերային վայելքներովը
 (•) արբշխո՛ւ, դրեթէ ակամայ կերթար այդ օրը
 լուծքի: Քնացած չէր»:

Իրա՛ւ է աս, և եթէ այո՛, ի՞նչ սահմանի
 մէջ, մեր տեղուանքը և ի՞նչ են այդ վա-
 յելքները:

Յետոյ, նորէն Շահարիկ կ'ըսէ որբուայ-
 ըրին համար.

«Ապօրինի յարաբերութիւնները որոնք կը
 վխտային իր բոլորովը...»

Ստե՛նէ մը ի վեր ճարակող ամուսնայուծ-
 ման խնդրանքները տարբեր բան մը չեն ա-
 պացուցաներ արդէն. բայց ես նորէն կը փոր-
 ձուլմ հարցնելու, հիմնուելով Շահարիկի այս
 խիստ շահագրգռական ու documentaire վի-
 պակին վրայ թէ իրա՛ւ են այս բոլորը:

Հարցումս ամփոփելով, Մասիսի միջոցով
 հրաւեր կ'ուղղեմ գաւառի բոլոր ծանօթ ու
 խո՛նու գրողներուն որ հաճին՝ փոխանակ գը-
 ընելին ծայրովը խաղալու կեղծիքի քօղին հետ՝
 բոլորովին պատուէն զայն, և մեզի ըսեն թէ
 իրա՛ւ է որ ապօրինի յարաբերութիւնները կը
 վխտան գաւառներու մէջ, ինչպէս կը կար-
 դանք կոր մէկէ աւելի անգամներ, հարազատ
 և ուղղադատ գրութիւններու մէջ և ինչպէս
 կը լսենք կոր մէկէ աւելի արժանահաւատ ու
 ականատես վկաներէ: Եւ... երբէ՛ն ի վեր:

Եկած պատասխաններէն, որոնց սիրով
 պիտի բանայ Մասիս իր սխնակները, և ո-
 ղոնք կը յուսամ որ, իսկապէս ատ շատ կա-

րեւոր խնդիրը խողարկող շահագրգռական
 ուսումնասիրութիւններ պիտի ըլլան, պիտի
 ժայթքի ճշմարտութիւնը և պիտի ճշդուի հայ
 կնիկան դէմքին մէկ շատ կարեւոր գիծերէն
 մին:

Ապագան ալ պիտի դիմնայ, à quoi s'en
 tenir.

Օ. ՉԻՖԹԷ-ՍՍՐԱՅ.

ՌՕՊԷՐԴ ԳՕԼԷՃԻ ամալերջի հանդէսը
 տեղի ունեցաւ չորեքշաբթի օրը, վարժարա-
 նին մեծ սրահին մէջ, ամերիկեան դեսպանին
 նախագահութեամբ: Կրթական նախարարու-
 թեան կողմէ ներկայ էր Սալի՛ պէյ: Մեր Ս.
 Պատրիարքի պատուիրակներն էին՝ Տ. Բաբ-
 դէն, Տ. Գնէլ և Տ. Մեսրոպ վարդապետ-
 ները: Հոն էին նաև Տ. Մկրտիչ եպիսկ. Վե-
 հապետեան և Ներսէս Վրդ. Դանիէլեան,
 Մխիթարեան Միաբանութեան Հ. Գրիգորիս
 Վրդ. Գալէմքեարեան, Յունաց Պատր. Փո-
 խանորդը, Պուլկարայ Եկզարքին կողմէ հո-
 դեւորական մը և շատ մը ծանօթ անձնաւո-
 րութիւններ: Վարժարանին այս տարուան
 շրջանաւարտներուն թիւն է 19, որոնցմէ ճը
 Հայ՝ Պ. Պ. Նշան Թօքաթլեան, Կիւլպէնիկ
 Կիւլպէնիկեան, Տիգրան Գույումճեան, Լեւոն
 Տ. Մեսրոպեան, Մարտիկ Լ. Պալեօղեան և
 Հրանտ Շիրինեան: Աւարտական ճտերը զոր
 արտասանեցին շրջանաւարտները՝ գրական,
 գիտական, կրթական, առևտրական նիւթե-
 րու վրայ, մեծապէս զնահատուեցան իրբե-
 արդիւնք բեղմնաւոր կերպով բոլորուած զըպ-
 րօցական շրջանի մը և անձնական կարողու-
 թեան:

Վարժարանին սնորէն Տոքթ. Ուոչպըրն
 կատարեց վկայականներու բաշխումը, հակիրճ
 ճառով մը:

Ռօպէրթ Գօլէճը այս տարի նախորդ շըր-
 ջանէն աւելի աշակերտ ունի: Յոյներէն վեր-
 ջը՝ մեծամասնութիւնը Հայերը կը կազմեն:
 Յաւաջիկայ տարուան համար ալ բաւական
 թիւով շրջանաւարտներ պիտի տայ:



Բ Ա Յ Ն Ո Ւ Բ Ա Յ Ս Ք Բ Տ Ե Բ



(Գ. Մ Բ Յ Օ. Ն Ս. Կ)

Անտառին մեջ կը լսեմ բնութեան սուրբ մեղեդին
Մեղմ գեփիւռէն կը դողան մասադ ոստերն օրօրուն ,
Բիւր ծաղիկներ երփներանգ կը փողփողին իմ չորս դին՝
Ու սոխակին երգերը կ'աւետեն ինձ նոր գարուն :

Մարգին վրայ խառնուսիկ ես կ'երազեմ միայնակ ,
Մինչ կը բացուին արեւուն վառ ծաղիկներ անհամար ,
Սիրքս բափուր է սակայն , հոգիս թխսուր , աղչքնա՛կ ,
Զի երբ հեռու եմ քեզմէ՝ գարուն չըկայ ինձ համար :

Նրանի՛ այն օրերուն ուր ապրեցանք միասին . . . :
Պուրակներուն մեջ , հոգի՛ս , ման կուգայինք թե ի թե ,
Թռչող գարուն մեր կեանքին՝ լի անուրջով խօլ ու սին ,
Եւ նըմիկինք դալարը մեր փայերուն տակ թեթեւ :

Անգամ մըն ա՛յ , կը յիշե՛ս , գիշերն եր ջինջ , լուսավառ ,
Լուսնակն ինկած կը լողար լնին վրայ փայլալուռն ,
Կը սըփռէին ծաղիկներն անուռ բոլբոլ գերք բուրվառ՝
Կարծես ինկել ուզելով մեր սուրբ սիրոյն աչերուն :

Ջուրին վրայ հանդարտիկ երբօր նաւակ նստեցանք՝
Չայնով մը մեղմ , ֆաղցրալուր սիրոյ սաղեր երգեցիր .
Մուք անտար հեռուէն կուտար քեզի արձագանգ
Իսկ բարակ հով մ'ա՛յ կուգար շոյել մազերդ ցան ու ցիր :

Ու մեղիօրէն կը ծըփար մեր նաւակը լուսնին տակ . . . :
Հոգիս ամբողջ արբեցած շունչովդ անուռ , խնկաւեք ,
Յառանձ աչերս սիրազեղ նայուածքիդ մեջ ջինջ , յսակ՝
Ինձ համար է , կ'ըսէի , երջանկուրիւնն առ յաւեք :

Սակայն , աւա՛ղ , ցնդեցան այդ երազներս ոսկեղէն .
Հիմայ՝ քեզմէ բաժնուած՝ յիշատակովդ ես կ'ապրիմ :
Հազիւ ըմպել սկստանք երջանկութեան բաժակէն՝
Եւ ծովերով բաժնեց մեզ հակասագիրն ոյսերիմ :

Առանձնութեանս մեջ յանախ վերյուշուումը անցեալին
Արեան շիթեր կը ֆամէ սիրող սրտս կարեկեր .
Ա՛խ , այն արբեռ վայրկեաններն ըզմեզ ինչո՞ւ լրբեցին ,
Այդքան ինչո՞ւ անցաք շուտ , անուռ օրե՛ր , հին օրե՛ր . . . :

Ի՛նչ խաբուսիկ ես եղեր , երջանկութի՛ւն , խօլ պատահե՛մ . . . :
Գաղափարներս կը ծըփան անուրջներու մեջ տարտալ ,
Բնութեան նոսր հըմայներն վերքիս չունին ըստփոքն ,
Գանկըս կ'այրի , կը բռնկի եւ արցունքներս կուլ կուտամ :

Գրնաց ձմեռն ցրտառունչ , եկաւ գարուն վերքսին ,
Անտառին մեջ բռչուններն ծաղկանց դարձր կը սօնեն ,
Կ'երթայ սոխակն այցելել բոսորագել նուրբ վարդին .
Բայց իմ սիրոյս նոր գարունն , ախ , չպիտի գայ նորէն :

Քեզի համար սրտիս մեջ կառուցած եմ մի տանար
Ուր կը փակուիմ ամեն օր վեճերուս հետ դառն , անհուն .
Իսկ խոցոցած հոգւոյս խորն ուր մերթիկ կայ անդադար
Արցունքներովս եմ գրած , իմ սիրական , բու անուն . . . :

ԱՐՄԻՆ ՉՐԱՌՅԱՆ
Գոմեա

ԱՇՈՒՂ

ԱՆՏԱԽՈՐ ՀՈԳԻՆԵՐ

ՍՐԱՊ ՍԵՒԵԱՆԻՆ

... Եւ որովհետեւ Սօնիա կը պատմէր ափիկա , շրթունքը արհամարհոտ և յողմած շարժումներով , տեսանք որ Սաշա՝ հետզհետէ աւելի տոգոյն՝ մտիկ կ'ընէր զայն , շունչը բռնած :

— «Ինձի կը պատահի ասիկա՝ շարունակեց Սօնիա , երբ կը տեսնեմ կին մը սալօնի մը մէջ իր հարուստ արդուզարդովը հնդկահաւի պէս փքացած . կ'երեւակայեմ որ մէկիկ մէկիկ հագուստները կ'իյնան սրունքն ի վար և կը տեսնեմ զայն իր լարծուն մերկութեանը մէջ՝ անհունապէս տգեղ և գարշահոտ . ու բնականաբար , եթէ խօսի՝ չեմ կրնար լրջութեամբ մտիկ ընել զայն . դեռ շատ պղտիկ՝ դպրոցին մէջ երբ վարժուէիս—տաքիքոտ կին մը— զիս կը յանդիմանէր ուռուցիկ շեշտ մը տալով իր ձայնին՝ առօրեայ պոռչտուքներէն խոզոտ , փոխանակ մտիկ ընելու զինքը , միտքովս կը հանուեցնէի իր թաւամած մարմինը և կը խնդայի , կը խընդայի :

«Բայց ասիկա կը պատահի ինձի մանաւանդ հանդիսաւոր պարագաներու մէջ , երբ գլխաւոր անձերը՝ իրենց սեթեւեթին մէջ , պայմանադրական ծամածուծութիւններով կը դաւարուին , ջանալով տալ իրենց հասակին , ձայնին , շարժումներուն մեծ կարեւորութիւն մը , պաշտպանող և անմատչելի վեհութիւն մը , անխնայ կը մերկացնեմ գիրենք . և իրենց

մատուցել կամ հաղիւ պայթելու սպառնացող հագուստներու մէջ պարտկուող անձը դուրս կը պոռթկայ և կ'երեւան ինձի իրենց նախնական դիրքին մէջ , անուխորէն ծիծաղելի և կատակերգական » :

Սաշա կը նայէր Սօնիաի , իր աչքերը անփայլ խտտութիւն մը ունէին և մէկէն կարծես մեքենաբար սկսաւ խօսիլ :

— «Ստիկա պատահած է նաև ինձի և թէեւ շատ քիչ անգամ՝ քայց այնպիսի կարեւոր պարագաներու մէջ և այնպիսի ուժղը նութեամբ մը՝ որուն տաղնապին ներքեւ մնացած եմ օրերով և միշտ քայքայող ալդեցութիւն մը ունեցած է վրաս : Ստիկա ցաւազին կորուստ մը կը յիշեցնէ ինձի՝ իմ շատ սիրելի և անուշ Վէրաի որուն այնչա՛փ կը ցանկայի բոլոր հողուովս » :

Գիտէինք թէ իր նշանածը՝ Վէրա , զինքը թողած էր ամենուն անձանօթ պատճառով մը և որովհետեւ Վէրա միշտ կը փախչէր իր ներկայութենէն գրեթէ սարսափի դժացումով մը՝ այդ խղումը առեղծուածային հանգամանք մը ունէր մեզի համար , հետեւաբար շատ հետաքրքրութեամբ մտիկ ըրինք զինքը :

Մինակ Սօնիա , աչքերը կորուսած , հեռուն տիվանին վրայ երկնցած՝ իր վտիտ մասներովը դանդաղօրէն կը փեթտէր կարմիր կակաջ մը որուն թերթերը մէկիկ մէկիկ կ'իյնային իր ձերմակ հագուստին վրայ :

Երբեմն մեզի դառնալով կը խնդար , անարիւն շրթունքը պրկելով որոնց մէջէն կ'երեւային իր սուր , իր հատու ակունները :

Սաշա շարունակեց

— «Վերա գեղեցիկ էր այն օրը իր սեւ թաւիչէ շրջագեղեստին մէջ, որուն վրայ սաղին անդին ձերմակ կիւբիւրներ փրփուրի պէս կը վէտլէտէին հազուատին ծալքերը. անոր հասակը սլացիկ և նրբին՝ առաձգական ձկնութիւն մը ունէր թաւիչին փայփայիչ սեւութեանը մէջէն և զլուսը կը բարձրանար խորխոր փարթամութեամբ մը փալիլուն իր ոսկեղոյն մազերուն ցուքերով :

«Վերա գեղեցիկ էր և երբ իր ձեռքը իմինիս մէջ դրաւ, այնպիսի՝ թեթեւ փափկութիւն մը ունէր անիկա որ կարծես սլտի հալէր այրող մասններու մէջ :

«Բայց ահա՛, ինչպէս չեմ գիտեր, անշուշտ տարապայման սեղումովս հետեւանքով, նախ խուսափող և տարտամ ու յետոյ որոշակի զգացի պղտիկ ոսկորի մը—օ՛հ շատ պզտիկ ոսկորի մը, հպու՛մը բթամատիս ներքև :

«Երբ սրահը դարձանք և կը դիտէի միշտ զմայլանքով իր սիրամարդի զնացքը սրահին մէջէն վայելուչ պերճանքով մը ներդաշնակ՝ չեմ գիտեր ինչ մը զիս կը խուլէր, պղտիկ բան մը սակայն ինչպէս սխալ նիչ մը երգի մը մէջ, սեւ կէտ մը... Օ՛հ, որդի մը հպու՛մը երբ ձեռքերդ վարդերով լեցուն կողովի մը մէջ կը մխես... և յամառութեամբ կը խորհէի պզտիկ ոսկորին, այնչա՛փ պզտիկ որ սակայն ինծի մտածել կուտար թէ Վէրաի ազուոր մարմնոյն մէջ կմտիս մը կար, ամենքս ալ կմտիսք մը կը կրէինք մեր մէջ և ինչ որ աւելի սարսափելի է՝ ապրող, շարժող կմտիսք մը...»

«Բայց իր երկնային նայուածքէն կաղզուրուած, հետզհետէ մոռցայ վրդովմունքս, և իր ժպտուն շրթունքը, մեղրի պէս անուշ շրթունքիս հպելով՝ ոլահ մը մաքրեցին յետին հետքն իսկ դառնութեան և ամէն անդամուան պէս դո՛հ ու երջանիկ սկսանք խօսակցել կրկարորէն... իրարու ըսելով այն սիրուն ու նայնութիւնները որ սիւքի պէս կը զովայնեն սրտերու տենդազին անհամբերութիւնը :

«Աչքերս սակայն կը պրպտէին, հետզհետէ շտապող անհանդարտութեամբ մը, իր մարմնին գիծը սեւ թաւիչին ծանր ծալքերուն մէջ. կը դիտէի կզակը, այտերը որ քիչ մը ցցուած էին և ուր որ սեւեւէի աչքերս՝ հոն

կարծես մորթը, մկանունքը կը բացուէին և կը տեսէի միայն ոսկորը... օ՛հ ահուելի վէրքի մը պէս :

«Ինչ որ ինծի երեւցաւ հետզհետէ, քանի մը երկվայրկեան տեւեց, բայց անոր սարսափը և շողկանքը դեռ հողուոյս մէջն է և կը բաւէ որ խորհիմ այդ մղձաւանջին՝ որպէս զի անիկա ներկայանայ ինծի իր անձկալի ճշգրութեամբը :

«Արագ, արագ, հազուատը ինկաւ սողալով ուսերէն վար, դետինը տարածուելով սեւ և թանձր հեղուկի մը պէս. անոր վրայ հետզհետէ կ'իյնային վարդազոյն ներքնազգեստները և յետոյ ձերմակեղէնները իրենց ժանեակային թեթեւութիւնը ձիւնեցին... Անմիջապէս մորթը կարծես յանկարծակի բորտոտութենէ մը բռնուած՝ կը ճայթէր ամէն կողմէն և թեփի պէս, գրեթէ՛ փոշիացած կ'իյնար գետին :

«Մորթաղերծ Վերա կը կենար գիմացս, իր աչքերը կը ցայտէին ակնակապիճներէն դուրս և հետզհետէ անոնց երկնային կապոյտը մածուցիկ կաթիլներով կ'իյնար այտերն ի վար :

«Կուրծքին վրայէն մկանունքները կը ձգտուէին հիւսուելով իրարու մէջ՝ պլլկուած ճարպերէն և ընդհատուած ջիղերու անոզոյն գիծերէն և մինչև մասններուն ծայրը ուր դեռ եզունգները հաղիւ կը թափթփէին, տեսայ երակներուն կապտորակ գիծերը որ հետզհետէ կը չորնային՝ անարիւն :

— «Օ՛հ ահուելի տեսիլքը. իմ սիրելի Վէրասս, իմ շատ գեղեցիկ և ցանկալի Վէրաս կը տեսնէի ահա այսպէս, ո և է մորթաղերծ անասունի մը պէս, պժգալի. և մինչ կը ջանայի մտքս վանել ուղեղս քանդող այս պատկերը, աւելի ուժգին արագութեամբ կը տեսնէի որ միսերը կը կախուէին ոսկորներուն վրայէն և կմտիսքը սպառնական և որոշ կը ցցուէր դիմացս, երկնցած կարծես, և կապկըպուած յողուածներուն վրայ :

«Ոսկորներն ալ ձերմիցան և վերջապէս թրջուած շաքարի կտորի մը պէս նախ ծակ ծակ, մէկէն քայքայուեցաւ միջոցին մէջ ձեղելով ֆոսֆորային աժգոյն ցուք մը որ տարտամորէն կ'ուրուաղծէր Վէրաի կմտիսքը :

«Գեառնը ողորմելիօրէն կը տարածուէր՝ միտի, ճարպի և ոսկերտութիւններու նողկալի դէպ մը, խառնուած հոտաւէտ ձերմակեղէններու, վարդագոյն ներքնազգեստներու, սև թաւիչի և ժանեակներու :

«Ինչպէ՞ս վերջացաւ այս կղերական երազը, չեմ գիտեր, և երբ տեսայ Վերա որ խու՛ւռուած ինձի կը հարցնէր .

— «Բայց ի՞նչ ունիս, Սաշա՛, ինչի՞ կը խորհնիս .

«Այնպիսի անյաղթելի գարչանք մը դժացի և իր ձեռքը, ա՛հ ճարպոտ և վարդագոյն ձեռքը, երբ կը շարժէր մազերուս վրայ, այնպիսի ուժգին սարսուռ մը կուտային ինձի իբր թէ դիակի մը ձեռքը ըլլար, որ սկսայ խնդալ, մոլեգին, անողոք, շար խնդուածքով մը, հաղիւ հատկտուած երբեմն խօսքերէ, սրն և հեգնական խօսքերէ շորս լորձուների պէս կը թքնէի . . .

«— Սիրելիս, կը խորհնիմ թէ գեղեցիկ ես, ամենէն գեղեցիկներէն աւելի . քու մազերդ, չրթուածքդ, աչքերդ, ա՛հ . . . ա՛ . . . ա՛հ . . . քու մազերդ կ'ըսեմ և հասակդ ու ձեռքերդ մահաւանդ, կակուղ, աղուոր ձեռքերդ . . .

ԶԱՊԻՆ ԵՍՍԵՅԱՆ

ՆՈՒՒՐԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԵՂԲԴՈՒՅՑԻ ՎԱՆՔ,Ը

Քարկէի — Իննականերու սարաւանդներուն վրայ՝ ամառուան գիշեր մըն էր սիրակ և անուշակ . ո՛չ հովեր կը ժածային, ո՛չ ալ հողմեր կը մաղմղուէին ու գիշերուան սեւ կծիկը կը քակուէր խորին լուսութեան մը մէջ : Խաղաղ էին աւազ աններ, լուս-ազբերեկը, ու հանսարտուկ Ս . Կարապետի նորաչէն դամբարանը, հոգեւորականաց խուցերը ու բովանդակ մեղանոցն վերանորոգ : Վեհաշուք այդ լուսութիւնը՝ մերթ ընդ մերթ կ'ընդ միջուէր հոգեհուազ Սաղմոսերգութեամբ մը, որ հոգեխոյզ ու դաշն ձայներով կը հնչուէր բլրակի ճղնարան — անտառին վերև, ուր շատ քիչ

յառաջ Քուրմերը իրենց զոհաբերութիւնը կ'ընէին սղնձի արձաններուն :

Քրձազգեստ, խստամբեր ու տաժանելի ճգնութեամբ իրենց կեանքը մաշող, մարմինը արորող երկու կրօնաւորներուն մէջտեղը՝ ծունդի եկած, թեւերը տարածուն՝ աղօթք — աղերսի պաղատանքը կը մատուցանէր ուրիշ պատկառելի հոգեւորական մը, որուն պարթև ու բարեձեւ իրանը, փառանդ դէմքը և սրտին վրայ անխնամ ինկած ալեխառն մօրուսը, արծուերիբ, գթալիբ աչերը կը մատնանշէին արդէն այդ հոյակապ անձնաւորութեան մեծութիւնը :

Նոյն ինքն էր Ս . Գրիգոր Լուսաւորիչ, Եկեղեցւոյ՝ Քրիստոսանուէր վարդապետը, ու բարի հովիւը :

Հոգեհուազ երգերն ու մրմունջները կը շարունակուէին ու կէս գիշերը կը մօտիկնար : Նոյն հանդարտութիւնը և նոյն մթութիւնը :

Սուրբ Կարապետի հանդիպակաց կողմը՝ վիթխարի ու լախանիստ պարսպի մը նման իր ուշապ շուքը կը տարածէ դաշտին վրայ Սիմի երկարաբաղուկ մէկ շղթան, որ գիշերուան մէջ աւելի պատկառելի ու խորհրդաւոր կը դառնայ : Նոյն օր՝ կէս գիշերէն վերջը՝ այս սարը կարծես արև-հոտեցաւ ու նըշըլվայ՝ լուսեղէն սիւն մը կախուեցաւ երկընքէն անոր վրայ, որ կը վառէր, կը փէլվըլջար ու կը լուսաւորէր սարն ու պրակը թաւախիտ :

Յանկարծ, դէպ ի հոն սեւեռեցաւ հայկացքը պատկառելի հոգեւորականին, ու անմիջապէս ոտքի ելաւ : Իրեն հետեւեցան երկու կրօնաւորներն ալ :

Լուսեղէն-երկնասլացիկ այդ ճառագայթը երթալով կը հաստատուէր ու կը պայծառանար . Լուսաւորիչը տեսնուող հետաքրքրութիւնէ մը բռնուած կուղէր խմանալ թէ ի՞նչ է այս գերբնական դիպուածը, երկնային ի՞նչ տեսակ նշան մը կամ ցուցք մը . . . : Արդեօք ի՞նչ անձանօթ սրբութիւններ ծածկուած կըրնան ըլլալ այն կողմերը . . .

— Պէտք է հետազօտել, պէտք է ծանօթանալ այս լուսացոյք սարին, նկատեց Նորին Սրբութիւնը, և հրաման ըրաւ իր հետեւորդ . . .

ներէն մէկին և անմիջապէս երկու բանդէս ճգնաւորներ ճամբայ հանուեցան դէպ լուսարծարծ սարը : Հետեւեալ ցորեկին ճգնաւորները վերադարձան, անստոյգ և անորոշ պատասխան մը բերելով, զի կը յայտարարէին թէ՛ երբ լերան բազուկներու վրայ սոք դնել սկսած էին, լոյսը հեռացեր ու համարաձեր էր...

Լուսաւորիչը մնաց սրտայուզութեան մէջ : Երկրորդ գիշեր՝ լոյսը կրկին փողփողեց առաջի տեղին վրայ, կրկին ճգնաւորներ զրկուեցան և ապարդիւն վերադարձան : Լուսաւորիչը ստիպուեցաւ իր հրեշտակին զիմել և ի տեսեան տեղեկացաւ, որ սրբութիւններ կան հոն պահուած եկեղեցւոյ անդրանիկ Առաքելոյն Ս. Թաղէոսի ձեռամբ, և Աստուած պիտի հաճէր՝ իր անուան տաճար մը հաստատել հոն...



Անկէ վերջ, Ս. Գրիգոր անմիջապէս ճամբայ հանած էր խումբ մը ճգնաւորներ, պատուիրելով որ անտառին խորերը պահուելին և աշաւորջ գանուին ճշդելու այն վայրը, ուր լոյսը կամար կը կապէ : Երկրորդ օրը աւելի կանուխկէկ՝ լոյսը կը փայլատակէ պայծառ ու մեծածաւալ : Երկիւղած հետազօտիչները մօտէն կը տեսնեն որ լուսեղէն սիւնը իջեր էր թաւուտ պուրակի եզրուտի ծառին վրայ, խարսխելով մինչև արմատը... : Դէպի հոն կը վազէր նաև Ս. Գրիգոր՝ Անտօնի ու կրօնիտէսի հետ՝ առանց սպասելու ճգնաւորաց վերադարձին, հոն խոնուեր էին նաև շրջակայքէն բարեպաշտ ու միամիտ ժողովրդեան բազմութիւնը : Երեք ժամէն լուսափայլ սարին վրայ էր Սուրբն Գրիգոր իր հետեւորդներով : Տրուած հրամանին վրայ՝ ճգնաւորները կը սկսին քրքրել եզրուտին արմատը՝ դուրս բերելով կաշեճրար աուփ մը, զոր Լուսաւորիչը կը քակէ հոգեղուարձ մըրմունջով ու կը գտնէ հետեւեալ սրբութիւնները—Մատուց մը Քրիստոսի Սաչախայտէն.—Շիշ իւղոյն օրհնութեան և Մարիամ Մազթաղենացիի ճկոյթը :

Երբ որ Սուրբն Թաղէոս կը համին թաւուտ անտառին խորը ու կը ծածկուի զինքը

վնտուղ աչքերէ, վախնալով թէ՛ գուցէ օր մը իր մօտ գանուած սրբութիւնները վտանգութիւն՝ Աստուծոյ հրամանով հոն կը թաղէ և ինքը կը հեռանայ, մինչև որ մօտ 300 տարի վերջ այս հրաշալի յայտնութեամբ երեւան կու գան : Յայնուրիւն մը՝ զոր ջերմեռանդօրէն կը պատմէր Սալվար մամիկս ալ : Լուսաւորիչը՝ որ արդէն արժանաւոր հանգստանոց մը կը վնտուէր այդ կողմերուս, Ս. Կարապետի նշխարներուն մնացեալ մասը զետեղելու, իր հրեշտակին հաւանութեամբ՝ նուիրական եզրուտ ծառին մօտերը վկայարան մը կը հիմնարկէ յանուն Ս. Յովհաննու Մըկերայի, ու կ'ամփոփէ սրբոյն ձախ ուսին ու կողերուն մասունքները : Կը հրամայէ վկայարանին մէջ՝ մասնաւոր պահարաններուս՝ զգուշութեամբ պահել Ս. Առաքելոյն աւանդ թողած սրբութիւնը՝ իբրեւ զարդ հոգեւոր եւ զանձ երկնաւոր նորաշէն հաստատութեան եւլն...

Փոքրիկ վկայարանը մենաստանի կը վերածուի, ու մենաստանը՝ տարուէ տարի զարգանալով ու բարգաւաճելով կը կազմակերպէ բազմախուռն միաբանութիւն մը՝ խստաբեր հոգեւորականաց եւ նզնոզ միանձանց...

Անոր համար վանքը կոչուեցաւ Եղդուսի վանք, եզրուտ ըսուած այն նուիրական ծառին անունով : Եզրուտը՝ մշտադալար ծառ մըն է, միջակ մեծութեամբ՝ փոքրասարս ծառերու տեսակէն : Մինչև հիմայ կ'ապրի այս ծառուկը՝ վանքին արեւելքը՝ տաճարին ըփիկ՝ մշտահոտ ազբիւրի մը շալակ, իր խնկենի շուքով : Գրէթէ միակն է իր տեսակին մէջ՝ Սիմի այդ շղթային վրայ ու մասնաւոր խնամքով կը պահպանուի : Բողոքախք ցանկով ու պատով պատասպարուած է, արմատին ըփուր ցան ու ցիր թափուած կը մնան խաչքարերու նշխարներ և դերբուկները վաղաչէն մատուռի մը : Նուիրական է եզրուտը՝ մասնաւոր հայ կնիկներու և աղջիկներու, ցաւազար հիւանդներու, որոնք՝ ամէն ատեն երբ այցելին՝ լաթերով պիտի պատասխանան որ ոսան ու տերեւը—ցաւն ու չոքը հոն թողու համար և կը տանին ջերմեռանդութեամբ անոր դալարի տերեւները ու թու

փերը՝ իբր բուժիչ ակտերու և հիւանդու-
թեանց: Կանանչութիւնը այս ծառի խորհրդա-
ւոր մէկ հմայքը կը կազմէ ուխտաւոր եր-
կիւղած ժողովրդին, որ դարերէ ի վեր դի-
թուեր է ծառերու սօսափիւնէն, ջերմուկներու
խոխոջէն, և՛ բարձանց ու խորոց սրբութիւն-
ներէն:

ԳՆՂԱՄ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՓՔՈՐՓ ՊՈՒՊԼԻ

Փաստաբան, հանքային շահագործմանց
ձեռնարկու, և հիմակ՝ գլխաւոր խմբագիրը
Իզմիրի Լա Ռեֆօնմ Ֆրանսերէն թերթին,
վարելով հանդերձ իր միւս գործերը:

Հայ գրականութեան ու լրագրութեան
մէջ հին անուն մը ունի Գ. Պուպլի որուն
յօդուածները կ'ըմբօշնուէին ու գրամարտե-
րը հետաքրքրութիւն կը շարժէին այն թուա-
կաններէն իսկ ուր՝ այսօրուան հրատարակա-
գիրներուն մեծագոյն մասը դպրոցական զը-
րասեղաններու վրայ կը գտնուէր տակաւին:
Իր գրիչն ալ իր անձին պէս չէ ձերացած սա-
կայն, և եթէ մեր պարբերականներուն մէջ
պատահական երեւումներ միայն կ'ունենայ,
Լա Ռեֆօնմի մէջ կանոնաւորապէս սկսած է
գրել, լաւ ֆրանսերէնով մը, կուռ խմբագ-
րականներ՝ օրուան հարցերու վրայ:

Իր հայերէն յօդուածները, Մասիսի մէջ
մասնաւորապէս, ընտանիքի բարի հօր մը և
ազրած մարդու մը զրէչն ելած ըլլալու տը-
պաւորութիւնը կը թողուն, իր նախասիրա-
կան նիւթերը ըլլալով՝ մանուկներու կրթու-
թիւնը, ամուսնական յարիւր երջանկութիւն,
աւանին հարցեր, բարեգործութիւն: Իր խօ-
սակցութեանց մէջ ալ, Իզմիրցի փաստաբան-
հրատարակագիրը նոյն սկզբունքները կը քա-
րողէ և նոյն քեզերը կը պաշտպանէ ինչ որ
իւր յօդուածներով: Կեղծ համեստասուն մը ու
կեղծ բարոյամուլ մը ըլլալէ բոլորովին հեռու,

—արգահատելի տիպարներ որոնք հետըզ-
հետէ կը շատնան մեր մէջ,— իր գրածներուն
համոզումը ունի և կեանքի կազմակերպու-
թեան մասին նահապետական իտէպններ: Եւ,
ասոր հակառակ, երբ ինչիբը գործի, աշխա-
տութեան վրայ ըլլայ, է՛ն գործնական եւան-
քիին պէս կը մտածէ, արհամարհելով յող-
նութիւնը, տաժանքը, գերադանցօրէն զիտ-
նալով ժամանակին յարգը. և զինքը գործի
ասպարէզին վրայ մօտէն տեսնողներ կը պատ-
մեն թէ հեւ ի հեւ աշխատութեան շարք
մըն է իր կեանքը, օր մը քաղքին մէջ, իր
գրասեղանին առջեւ, յաջորդ օրը դէսլ ի
դաւառին ներսերը, լեռներու ստորտարը, կիր-
ճերու մէջ, հանքերու շուրջը:


Անձով՝ բարեհամբոյր կերպարանք մը ու-
նի Գ. Պուպլի և երիտասարդական կորով
մը՝ հակառակ իր ազդպտեղ պիւսերուն որոնք
կը դժկամակին ձեր թկնալու: Աչքերուն մէջ
ժպիտով խառն արցունք մը կայ կարծես,
երբ սրտաբաց խօսակցութեան մը սկսի, մը-
տերմական շրջանակներու մէջ: Լեզուն, մա-
քուր հայերէն, գերծ չէ Իզմիրցիի այն կէս-
յունական շեշտէն որ այնքան անոյշ կը հըն-
չէ... կիներու բերնին մէջ մանաւանդ:

Հակառակ հին մը ըլլալուն՝ կարգ մը հին
պրոզներու արհամարհանքը չունի նորերուն
նկատմամբ, եւ երկու տարի առաջ՝ երբ Պո-
լիս կը գտնուէր, տեսանք զինքը քաջալե-
րող, զիւրահաղորդ, բարեացակամ՝ նորերուն
ու նորագոյններուն նկատմամբ: Իր բնաւո-
րութեան յատկանիչն է հաճոյակատարութիւն
իւր բարեկամներուն նկատմամբ որոնց ծառա-
յութիւն մատուցանելու առիթներ կը փնտռէ՝
կրնայ ըսուիլ՝ երբ առիթը ինքնին չի ներ-
կայանայ:

ԳՆՄԷՐ

Մեր ծանօթ աշխատակոցը ՄԼԻՍԷՏԷՍ
զրկած է մեզ գրական գեղեցիկ յօդուած մը
Յրանասական Ակադեմիին և Էտմօն Ռօսդանի
ընդունելութեան վրայ, զոր վերջին պահուն
ստացած ըլլալուս պատճառաւ: Մասիսի յա-
ջորդ թիւով միայն պիտի կրնանք հրատա-
րակել:

Բ Ե Ր Ա Յ Ի Թ Ա Ղ Ը



Մայիս 24ի կիրակին ու յաջորդ օրը՝ կրկուշարթի, ամբողջովին Բերայի թաղին նուիրեց Ս. Պատրիարքը, ինչ որ սովորութեան կարգ անցնել սկսած է, ամէն տարի, Հոգեգալստեան առթիւ որ Ս. Երրորդութիւն կեղեցիկին տօնն է: Ն. Սրբազնութիւնը կիրակի առաւօտ հանդիսաւոր պատարագ մատոյց, քարոզ խօսեցաւ և նախադահեց հոգեհանգստեան պաշտօնին որ կատարուեցաւ Գաղաղեան գերդաստանի ննջեցեալներուն հողոյն: Միջօրէին, Արուեստանոցի սրահին մէջ, Թաղ. Խորհուրդին կողմէ սեղան մը տրուեցաւ ի պատիւ Ս. Պատրիարքին, որուն շուրջը կը դանուէին՝ Բերայի քարոզիչ Տ. Հմայեակ Սրբազան, Քէօթահեայի համակրելի առաջնորդը՝ Աղանունի վարդապետ, Տ. Բարդէն և Տ. Եղրաս վարդապետները, քահանայական դասը, Թաղ. Խորհուրդի անդամները, լրագրապետներ և այլն:

Առաջին բաժակը պարպուեցաւ վեհ. կայսեր արուշատութեանը համար:

Յետոյ, յաջորդաբար, Ն. Ս. Օծութիւն՝ ընդէ, Հայրապետին, Օրմանեան Ս. Պատրիարքին, Բերայի Գեր. քարոզչին, Թաղ. Խորհուրդի անդամներուն և քահանայական դասին կենացը բաժակներ առաջարկուեցան: Տ. Հմայեակ Սրբազան ծանրացաւ Մայր Աթոռի նշանակութեան վրայ, և Ս. Պատրիարք Հայր խօսեցաւ Ս. Էջմիածնի հիմնարկութեան վրայ, յիշեցնելով որ Քրիստոսի 303 թուականին էր որ Ս. Գր. Լուսաւորիչ Մայր Աթոռոյ հիմը դրաւ իր տեսիլքին ոյժովը, և անկէ ի վեր ձիւտ 16 Դարեր կամ 32 Յոբելեաններ բողբոջեցան: Հրաւիրելով ներկայ եկեղեցականներն՝ իւրաքանչիւրն իր եկեղեցիին մէջ պատշաճօրէն և վայելչօրէն փառաւորելու այս դերազանց Յոբելեանը, և ծանուցանելով որ ինքն ալ նոյն հանդէսը պիտի կատարէ Մայր Եկեղեցոյ մէջ, Ս. Պատրիարք Հայրն աղօթեց որ Աստուած միշտ անխախտ և անասան պահէ Հայ. Եկեղեցին:

Մանաւորելով խօսքը Բերայի լաղին վրայ, Ն. Սրբազնութիւնը շեշտեց անխանջ գործունէութիւնը Թաղ. Խորհուրդին և մանաւորապէս անոր բաղմարդիւն ատենապետին՝ Վսեմ. Միքայէլ Էֆ. Մամիկոնեանի, որ թէև անձնական տկարութեան պատճառաւ վերջերս փափագ յայտնած էր թողուլ այդ ծանրաբեռն պաշտօնը, բայց տեղի տալով կղած խնդրանքներուն, կը շարունակէ նուիրել իր անձնուէր աջակցութիւնը թաղային գործերուն և վարժարաններուն: Ս. Պատրիարքը յիշեց երեք նոր անդամներու անուանումը, թաղային գործերու շատութեան պատճառաւ, Վսեմ. Ռօպէն Էֆ. Եաղրճեան, Յովսէփ Էֆ. Երևուֆեան և Միհրան Էֆ. Տէր-Ներսէսեան, առաջինը իւրեւ դեր-ատենապետ Թաղ. Խորհուրդի, իսկ Յովսէփ Էֆ. Երևուֆեան մանաւորապէս վարժարաններու Հոգաբարձութեան ղեկավար համար որուն՝ հարկ չիկայ ըսելու՝ ամէն ձեռնհասութիւն ունի:

Երկուշաբթի օրը, Ս. Պատրիարքը՝ ընկերակցութեամբ Տ. Հմայեակ կախիկպոսի, Տ. Բարդէն վրդ. ի և Թաղ. Խորհուրդի երեք անդամներուն, այցելեց Էստեան երկեսու վարժարանը ուր՝ Տնօրէն Գրիգոր Էֆ. Մարգարեանի առաջնորդութեամբ՝ շրջեցաւ թէ՛ մանչերու և թէ՛ աղջիկներու բոլոր դասարանները և քննեց աշակերտներն ու աշակերտուհիները զանազան ձևերու մէջ: Յետոյ դնաց այցելել Նարեկեան Մանկապարտէզը, Արուեստանոցը, Բանկալթիի դերեղմանատան Ս. Լուսաւորիչ դպրոցը և ի վերջոյ Տօլապ-Տէրէի խորխրած ու աղքատիկ դպրոցը որուն վերաջինութիւնը օրուան հարցը կղած է այս միջոցիս Թաղ. Խորհուրդին համար:



Վերջապէս ձեռնարկուեցաւ Շիշիի դերեղմանատան դրան և յարակից խցիկներու շինութեան, որուն առթիւ հիմնարկէքի հանդէս մը կատարուեցաւ հինգշաբթի առտու, Բերայի աւազերէց Տ. Մկրեան Հօր նախադասութեամբ:

Արսօմաեք Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱ Օրագրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
 ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Փր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Ճ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ ԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ տ'ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահարածիներու բարդման (accumulation des bénéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեքամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասուցն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏԵՐԵՆՈՒՍԻՆ

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաթ Քաթրըք Օղլու

Մասնաճիւղ՝ Դալաթիա, Ինայէթ Խան, գործակալ Միշրան Էֆ. Դաւիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

Ա.Տ.Ա.Մ.Ն.Ա.ՐՈՅԺ

Մուգաֆերիէ Հիւանդանոցին եւ Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զբոսանեան արտաքսման

Պալպալեան ամէն օր ակոսայի ամէն տեւակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոսաները: Յորեկները ակոսայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կ'սխեալ է:

Ազգասներուն հրի

“ AU TALON D'OR ”

Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՉԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Գ Ա Ռ Լ Օ Ա Յ Ն Ա Մ Ե Ա Ն

Հ Ա Յ Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉՍՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՅ ԵՒ ԿԱՆԱՆՅ ՀԱՍԱՐ

Նաեւ կողերու համար պատրաստուած Կալաթա, Վոյվոսա փողոց, թիւ 103 շաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կոչիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ շինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատուներ:

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՉԵԱՆ
ՅԱՆՉՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից, սպազրական գործերու պատրաստութեան հոգը.

ԴԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն

մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՉԵԱՆ
ՍԱՄՍՈՆ

ՖԷՆԻԿՍ ԷՍԲԱՆԵՅՈՒ

ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Հրդեհի եւ Կեանքի Ի ԲԱՐԻՉ


Դրամազուլիս՝ 63,228,000 ֆրանք: Դրամա-

տուն Ի Կ. Պոլիս՝ Գրէտի Լիօնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ ճիւղին

ՔԱՌԼՕ ԱՆՆԱՄԵԱՆ

Կալաթա, Վոյլոսա փողոց Թիւ 103



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ զէջ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՂԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, բամբակի, ու սամբուրի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ զիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՆԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆՎՆԱԳՐԱՐՈՒՄՆԵՐ

- ՌԵՐԱ.** } 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
- } 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
- ԿՍԼԱԹԱ.** } 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
- } 2. Գարաքէոյ, Թրամվէյին կայարանին դէմ.
- ՊՈՒԻՍ** } 1. Սուլթան Համամ, Թ.
- } 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.
- ՍԿՐԻՏԱՐ** Զարը Պոլսոյ, Թ. 120.

Դասերը եւ Նորոգութիւնք արի.

Կատարելաբերաբաւարարութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԻՆՆԵՐ, ԿԵԱՆՔ, ՓՈՒՍԻՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

Ընկերութեան դրամագումարը, ամբողջապէս վճարուած	10,667,667	Ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներու ու տոկոս	54,000,000	»
Նրաշխարհութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բարափին վայ, Մախասան հին տեղը

Ընդհ. ԳՅԵԻՅ
Ա. ՀԻԻՐՄԻԻՉ

Ընդհ. Գործակալ
ՓԷՆՏՈՐ ՌԷԲԵՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ՆԻ ԻՐ ՑԵՂԸ, Կեդ. ԲրոՅ. Ա. Ալաբէխը, Թարգմ. Մ. Կ. Նագիկեան ԷՏ. Սեռային առողջարանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովրդական գիրքը երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ Յ. Մատթէոսեան տպարանէն: Դիւն 5 շրջ: Վաճառման կեդրոնատեղին է Պալեկց գրասուն Կ. Պոլիս:

ԳՐՊԱՆԻ ԲՍՌԱՐԱՆ անգլիէրէնէ հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսանողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով զբաղողներու համար: Դիւն 8 շրջ: Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով: Կեդրոնատեղի Սագաեան տպարան, Կալաթա:

ՄԱՌՇ ՎԷՌԱՆՏԱ, դաշնակահար Ահարոն ԷՖ. Մըսրրլեանի հեղինակած սոյն նուագատարը կը ծախուի «Անտէլիպ» վաճառատունը՝ Պաճկ-Գարու եւ Ղալաթիա, Բոսնիային, Կիր եւ Բրիտանիա ի Բերա, եւ Սկիւտար հեղինակին ընկերանը:

ՔԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿՕՅՍ . ԹԱԳ . ՍՌԱՆԶՆԱՇՆՈՐՀԵՍԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ . ԸՆԿ .

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊՕՏՈՒՍԿԱԼ ՆՍԽԱԳՍՀ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ն . Ա . Բ . ԳՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԿՈ

ԼԱ ԷՍԹԵՐԵՅԵԱ

Ապահովագր . ԸՆԿ . ընդգեմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՃԷՆ)

ԱԼԼԷԱՆՑԱ

Մովային ապահովագր . ԸՆԿ . (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ . Պոլիս , Գոքսի Լիօնի

Ընդհ . եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ . ՑԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ , Պոլիս , Հանօթուլօ խան , Թ . 52-53-54-55-56

ՏՈՔԹՈՐ Լ . ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՉ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց

(Վկայեալ Բարիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ , կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարեալ գործեալ դրութիւններով :

Բարիզի , Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էքսպերտ) պաշտօնը վարած ըլլալով , գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ , այս անգամ Կ . Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա , Թարլա Պաշը , Թիւ 136 :

Մանօք . — Հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ , ժամը 1-4 (Ը . Ն .) : Նրեքշարթի օրերը միւսնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները :

16-20

ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրերոյ մը , որ խիստ լաւ մէթօտ մը ունի նորալարժները մարդկու դաշնակահարութեան . կը վաճառի այցելութեամբ դաս տալ տուներու մէջ : Դիմել՝ Մասիսի խմբագրութեան :

3-4

HOTEL «FERAH»

ՕԹԷԼ «ՖԷՐԱՀ»

Բրինջիբօ , Նիզամի պողոտային վրայ , ծովափայտայ , ընդարձակ պարտէզներու մէջ : Վարձակալը , Առաքել Տերեկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրածանօթ նախկին Գասպար ճաշարանը , յանձն առած է նիւթական ամէն գոնողութիւններ ընել՝ իր բազմաթիւ յաճախորդներուն հանդատութեանը համար :

Գիները չափաւոր . լաւ եւ մաքուր մնունք . պանդոկը բաց է եւրոպական մայրա մէկէն սխեալ :

5-10

ՏՈՔԹ . Ն . ՄՕՍԻՍ (Բերա , Թագսիմ փողոց , ք . 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ , կը դարմանէ մամոււորաբար , նոր մեթոսներով եւ խնամով , ստամոքսի , աղեաց , միզային ճամբաներու հիւանդութիւնները , ջգային սկզբութիւնները , դազդիական ակտերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները : Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :